ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԵՌՈՆՋ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Լրացավ հայ բանագիտության երախտավոր, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Գալուստի Տեր-Մինասյանի ծննդյան 90 և գիտա-մանկավարժական գործունեության 70 տարին:

Երվանդ Գալուստի Տեր-Մինասյանը հայ բանագիտության այն եզակի բախտավորներից է, որոնք իրենց կյանքը բոլորանվեր տվել են հարազատ ժողովրդի մշակույթի զարգացմանը:

Ե. Գ. Տեր-Մինասյանի մանկությունն անցել է Արագածի գեղատեսիլ բնության գրկում՝ Արթիկի շրջանի Հառիճ գյուղում, ուր և ծնվել է նա 1879 թ.: Տարրական կրթությունը ստացել է Հառիճի ծխական երկդասյան դպրոցում, որը ավարտելուց հետո ընդունվել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը:

Ճեմարանը ավարտել է 1900 թ.՝ առաջին աստիճանի դիպլոմով, ապա 4 տարի սովորել է Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում՝ ունկնդրելով աշխարհահռչակ գիտնականների:

1904 թ. փայլուն կերպով պաշտպանել է դիսերտացիա Ասորա-հայկական եկեղեցական առնչությունների վերաբերյալ, որի համար նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականին Բեռլինի գիտությունների ակադեմիայի ժողովածուում հրատարակվել է այս ուսումնասիրությունը, որը որոշ բարեփոխություններով ու լրացումներով 1908 թ. հրատարակվել է նաև հայերեն: 1904 թ. վերադառնալով հայրենիք Ե. Տեր-Մինասյանը մի քանի տարի պաշտոնավարել է Գևորգյան ճեմարանում՝ ավանդելով հասարակագիտական զանազան առարկաներ, ինչպես նաև գերմաներեն լեզու: Նա միաժամանակ եղել է Էջմիածնի տպարանի տնօրենը: 1908 թ. լույս է տեսել Ե. Տեր-Մինասյանի «Ընդհանուր եկեղեցական պատմությունը» ուսումնասիրության առաջին հատորը, իսկ 1909-ին՝ «Կրոնների պատմությունը»: 1910 թվականից սկսվում է նրա մանկավարժական գործունեությունը Ալեքսանդրապոլի և Վաղարշապատի զանազան դպրոցներում:

Ե. Տեր-Մինասյանի գիտա-մանկավարժական գործունեությունը հատկապես բեղմնավոր եղավ սովետական շրջանում: Նա մեծ խանդավառությամբ իր գիտելիքներն ու հարուստ փորձը նվիրեց իր ժողովրդի վերածնության գործին: 1921—22 թթ. նա եղել է Հայաստանի գիտական ինստիտուտի գիտնական քարտուղարը և նրա

օրգանի՝ «Բանբերի» խմբագիրը, իսկ՝ 1930 թ. սկսած աշխատել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում, ապա և Երևանի պետական համալսարանում: 1943 թ. առ այսօր Ե. Տեր-Մինասյանը աշխատում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում, ղեկավարում է ինստիտուտի բառարանագրության բաժինը:

Անուրանալի են նրա ծառայությունները ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններ ստեղծելու ասպարեզում: Պրոֆեսոր Ե. Տեր-Մինասյանը հեղինակակից է մի շարք դպրոցական բառարանների, ակտիվ մասնակցություն է բերում ժամանակակից հայոց լեզվի բացատրական բազմահատոր բառարանի աշխատանքներին:

Ե. Տեր-Մինասյանը նաև արգասավոր բանասեր ու բնագրագետ է: Նա իր հմտալից հետազոտություններով պարզաբանել է հայ բանասիրության բազմաթիվ կնճռոտ հարցեր և տվել նրանց վերջնական լուծումը: Դրանցից ակնառուներն են «Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը և նրա ասորերեն սկզբնատիպը», «Հինգերորդ-դարի հայ գրականությունը», «Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանության ժամանակը», «Զգոն» կոչված գրքի հեղինակը և թարգմանության ժամանակը» և այլ արժեքավոր ուսումնասիրությունները:

Պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի կատարած աշխատանքները եղիշեագիտության ասպարեզում անգերագնահատելի են: Նրա գրչին է պատկանում Եղիշեի անմահ դյուցազներգությունն աշխարհաբար թարգմանությունը: 1957 թ. նա հրատարակեց «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության նամահավաք բնագիրը՝ չափազանց արժեքավոր ծանոթագրություններով: Պրոֆ. Տեր-Մինասյանը 1968 թ. հրատարակեց իր մի նոր ուսումնասիրությունը՝ նվիրված հայագիտության սակավ լուսաբանված հարցերից մեկին՝ միջնադարյան աղանդների ծագմանն ու զարգացմանը, բացահայտելով այդ շարժումների սոցիալ-դասակարգային բնույթն ու էությունը: Պրոֆեսոր Տեր-Մինասյանը իր ներդրումն ունի նաև ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակվող հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծման գործում, ինչպես նաև մարքսիստական գրականության հայերեն թարգմանության և հայ քաղաքական տերմինաբանության բնագավառներում: Նա թարգմանել է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի մի շարք երկերը:

Հայ բանասիրության բնագավառում ունեցած անգնահատելի ծառայության համար, դեռևս 1943 թ., Երվանդ Տեր-Մինասյանին շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1945-ին՝ պրոֆեսորի կոչում: Նա արժանացել է գիտության վաստակավոր գործիչի պատվավոր կոչման, իսկ ծննդյան ու գործունեության այս տարելիցի առթիվ՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

Ծերունազարդ գիտնականը այսօր ևս շարունակում է ստեղծագործել արթուն մտքով և երիտասարդական ավյունով: Ցանկանք, որ մեր վաստակաշատ պրոֆեսորը այսուհետև ևս երկար տարիներ ստեղծագործի հոգուտ հայագիտության:

Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ